ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Ն ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/148-1

ք. Երևան «08» 09 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Զաքարյանի, որը գործում է հիմանարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **կրթական օբյեկտների (Գյումրու Հ 26 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքներ) հիմնանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից կատարման ժամկետ է սահմանվում 2020 թ դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 57 895 160 (Հիսունյոթ միլիոն ութ հարյուր իննսունհինգ հազար հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, որից 9 649 193 (ինը միլիոն վեց հարյուր քառասունինը հազար հարյուր իննսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսեր:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

---

[31] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Հասցեն՝ ք.Արտաշատ, Մարքսի 83
Կառավարական տուն 2,	Հեռ.՝ +37493805595, +37495122445
ՀՀ ֆինանսների նախարարության	էլ. փոստ՝ zet-profil@mail.ru
գործառնական վարչություն	Հայբիզնեսբանկ
Հ/Հ **900011035251**	Հ/Հ 1150000331970100
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 04214335
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	**Տնօրեն՝**
---------- **Վ. Գասպարյան**	---------- **Ռ. Զաքարյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
« 08 » 09 2020թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/148-1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Չափաբաժին 1. Կրթական օբյեկտների հիմնանորոգում-1

«ԳՅՈՒՄՐՈՒ N 26 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ և ՆՈՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Շիֆր, նորմա-տիվի համարը	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուրի արժեքը միավորի համար տոգաս դրամ	Ընդհանուրի արժեքը հազար դրամ
ԲԱԺԻՆ-1						
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
1. ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ. I ՀԱՐԿ						
Հատակներ						
1	May-39	Մանրահատակի հղկում	100մ2	2.362	100	236.2
2	May-20	Մանրահատակի լրացում առկա նյութով	մ2	16.5	10	165
3	14-385	Մանրահատակի լաքապատում	100մ2	2.362	200	472.4
4	E11-221-1	Պլասմասե շրիշակ h=70մմ	մ	145	1	145
	30-Jul					0
5	E46-109	Մետլախե հատակի քանդում	100մ2	0.089	100	8.9
6	E46-99	Ցեմենտ. ավազի հարթաշերտի քանդում	մ3	1.068	20	21.36
7	E11-135 30-06-2020	Նոր մետլախե հատակի կառուցում	100մ2	0.089	1000	89
8	C310-13	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	0.62	3	1.86
9	E11-78	Խճանկար հատակների հղկում	100մ2	2.943	300	882.9
Պատեր						
1	E13-263	Պատերի մաքրում սոսնձաներկից	100մ2	4.577	0.5	2.2885
2	E13-263	Պատերի մաքրում յուղաներկից	100մ2	4.397	0.5	2.1985
3	E15-250-1 1-АР15-55У-5	Պատերի քսահարթում գիպսոնիտով	100մ2	8.974	200	1794.8
4	E15-664 168-7	Պատերի ներկում լատեքսային ներկով	100մ2	4.577	200	915.4
5	E15-635	Պատերի ներկում յուղաներկով՝	100մ2	4.397	200	879.4
6	E15-250-1 1-АР15-55У-5	Շեպերի քսահարթում գիպսոնիտով	100մ2	0.868	200	173.6
7	E15-664 168-7	Շեպերի ներկում լատեքսային ներկով	100մ2	0.868	200	173.6

8	E46-37	Պատերից գաջե սվաղի քանդում `սան. հանգ.	100մ2	0.416	100	41.6
9	E15-262	Պատերի սվաղում ցեմ. ավազի շաղախով	100մ2	0.416	100	41.6
10	E15-90	Պատերի երեսապատում հաղճասալով /լրացում/	մ2	41.6	10	416
		Առաստաղներ				
1	E13-263	Առաստաղների մաքրում սոսնձաներկից	100մ2	5.306	50	265.3
2	E15-251-1 1-АР15-55У-5	Առաստաղների քսահարթում գիպսոնիտով	100մ2	5.306	200	1061.2
3	E15-665 168-8	Առաստաղների ներկում լատեկսային ներկով	100մ2	5.306	200	1061.2
4	E34-389 k0.5 66-1	Կախովի առաստաղ՝ գունավոր պլաստիկից	մ2	17.8	5	89
		Ընդամենը				**8,939.81**
		2. ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ. II ՀԱՐԿ				
		Հատակներ				
1	May-39	Մանրահատակի հղկում	100մ2	4.089	100	408.9
2	May-20	Մանրահատակի լրացում առկա նյութով	մ2	28.6	10	286
3	14-385	Մանրահատակի լաքապատում	100մ2	4.089	100	408.9
4	E11-221-1 30-07-2020	Պլասմասե շրիշակ h=70մմ	մ	291.6	1	291.6
5	E46-109	Մետլախե հատակի քանդում	100մ2	0.132	100	13.2
6	E46-99	Ցեմենտ. ավազի հարթաշերտի քանդում	մ3	1.584	20	31.68
7	E11-135	Նոր մետլախե հատակի կառուցում	100մ2	0.132	1000	132
8	C310-13	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	1.8	3	5.4
9	E11-78	Խճանկար հատակների հղկում	100մ2	1.516	200	303.2
		Պատեր				
1	E13-263	Պատերի մաքրում սոսնձաներկից	100մ2	6.032	50	301.6
2	E13-263	Պատերի մաքրում յուղաներկից	100մ2	5.643	50	282.15
3	E15-250-1 1-АР15-55У-5	Պատերի քսահարթում գիպսոնիտով	100մ2	11.675	200	2335
4	E15-664 168-7	Պատերի ներկում լատեքսային ներկով	100մ2	6.032	200	1206.4
5	E15-635	Պատերի ներկում յուղաներկով՝	100մ2	5.643	200	1128.6
6	E15-250-1 1-АР15-55У-5	Շեպերի քսահարթում գիպսոնիտով	100մ2	0.702	500	351
7	E15-664 168-7	Շեպերի ներկում լատեքսային ներկով	100մ2	0.702	200	140.4
8	E46-37	Պատերից գաջե սվաղի քանդում `սան. հանգ.	100մ2	0.42	100	42
9	E15-262	Պատերի սվաղում ցեմ. ավազի	100մ2	0.416	200	83.2

		շաղախով				
10	E15-90	Պատերի երեսապատում հաղճասալով /լրացում/	մ2	41.6	10	416
		Առաստաղներ				
1	E13-263	Առաստաղների մաքրում սոսնձաներկից	100մ2	5.605	50	280.25
2	E15-251-1 1-АР15-55У-5	Առաստաղների քսահարթում գիպսոնիտով	100մ2	5.605	200	1121
3	E15-665	Առաստաղների ներկում լատեկսային ներկով	100մ2	5.605	200	1121
4	E34-389 k0.5	Կախովի առաստաղ՝ գունավոր պլաստիկից	մ2	17.8	5	89
		Ընդամենը				**10,778.48**
		3. Պ-1 ՄԱԿՆԻՇԻ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐ				
1	E46-122	Փայտե՝ 1.35*1.77 մ. չափի պատուհանի ապամոնտաժում	100մ2	1.3384	100	133.84
2	ի.տ.	Սպիտակ մետաղապլաստե՝ 1.35*1.77 մ. չափի պատուհանի մոնտաժում՝ □ացվող մաս	մ2	51.84	30	1555.2
3	ի.տ.	Սպիտակ մետաղապլաստե՝ 1.35*1.77 մ. չափի պատուհանի մոնտաժում՝ չ□ացվող մաս	մ2	84.36	25	2109
4	E15-250-1 1-АР15-55У-5	Պատուհանների շեպերի գաջե սվաղի իրականացում	100մ2	0.9747	500	487.35
5	E15-664	Շեպերի ներկում լատեքսային ներկով	100մ2	0.1	200	20
6	E12-280	Պատուհանների գոգերին առկա գոգնոցների վերատեղադրում	մ2	11.97	5	59.85
7	ի.տ.	Պլաստմասսե սպիտակ պատուհանագոգերի տեղադրում՝ 350 մմ. լայն	գ.մ	79.8	5	399
8	C310-13	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	0.36	3	1.08
		Ընդամենը				**4,765.32**
		4. Պ-2 ՄԱԿՆԻՇԻ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐ				
1	E46-122	Փայտե՝ 0.75*1.77 մ. չափի պատուհանի ապամոնտաժում	100մ2	0.2125	100	21.25
2	ի.տ.	Սպիտակ մետաղապլաստե՝ 0.75*1.77 մ. չափի պատուհանի մոնտաժում՝ □ացվող մաս	մ2	15.6	30	468
3	ի.տ.	Սպիտակ մետաղապլաստե՝ 0.75*1.77 մ. չափի պատուհանի մոնտաժում՝ չ□ացվող մաս	մ2	5.65	25	141.25
4	E15-250-1	Պատուհանների շեպերի գաջե սվաղի իրականացում	100մ2	0.24	500	120

5	E15-664	Շեպերի ներկում լատեքսային ներկով	100մ2	0.1	200	20
6	E12-280	Պատուհանների գոգերին առկա գոգնոցների վերատեղադրում	մ2	3.04	5	15.2
7	ի.տ.	Պլաստմասսե սպիտակ պատուհանագոգերի տեղադրում՝ 350 մմ. լայն	գ.մ	79.8	5	399
8	C310-13	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	0.06	3	0.18
		Ընդամենը				**1,184.88**
5. ՊԱՏՈՒՀԱՆԻ ԲԱՑՎԱԾՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐ						
1	շուկա	Սրատաշ տուֆից շարվածքի կտրում 120 մմ խորության	գ.մ.	6.24	1	6.24
2	E46-79	«Միդիս» շարվածքի քանդում՝ 50 սմ հաստության	մ2	1.15	10	11.5
3	E46-7	Պողպատե անկյունակի 63*4 և Շերտապողպատի 40*4 մոնտաժում՝	տ	0.06	100	6
4	ի.տ.	Պողպատե անկյունակ՝ 63*4	գ.մ	12.48	3	37.44
5	ի.տ.	Շերտապողպատ՝ 40*4	գ.մ	8	2	16
6	E15-277	Մակերեսի պատում ռաբիցա ցանցով և սվաղում ցեմենտե շաղախով	100մ2	0.0312	300	9.36
7	C310-13	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	1.5	3	4.5
		Ընդամենը				**91.04**
6. I ՄԱՍՆԱՇԵՆՔ . ԴՌՆԵՐ						
ԴՈՒՌ՝ Դ-1-ի ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐ						
1	E46-124	Փայտե՝ 0.85*2.35 մ. չափի դռների ապամոնտաժում	100մ2	0.52	200	104
2	ի.տ.	Սպիտակ մետաղապլաստե՝ 0.85*2.35 մ. չափի դռների մոնտաժում	մ2	52	50	2600
3	E15-246-1	Դռան շեպերի գաջե սվաղի իրականացում	100մ2	0.061	1000	61
ԴՈՒՌ՝ Դ-2-ի ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐ						
1	E46-124	Փայտե՝ 0.70*2.10 մ. չափի դռների ապամոնտաժում	100մ2	0.176	200	35.2
2	ի.տ.	Սպիտակ մետաղապլաստե՝ 0.7*2.10 մ. չափի դռների մոնտաժում	մ2	17.64	50	882
3	E15-246-1	Դռան շեպերի գաջե սվաղի իրականացում	100մ2	0.102	1000	102
ԴՈՒՌ՝ Դ-3-ի ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐ						
1	E46-124	Փայտե՝ 0.85*2.35 մ. չափի դռների ապամոնտաժում	100մ2	0.05	200	10
2	ի.տ.	Սպիտակ մետաղապլաստե՝ 0.85*2.35 մ. չափի դռների մոնտաժում	մ2	5	50	250
3	E15-246-1	Դռան շեպերի գաջե սվաղի իրականացում	100մ2	0.0386	1000	38.6
		Ընդամենը				**4,082.80**
7. Հատակներ						

1	E46-102	Փայտե հատակների քանդում լագաների հետ	100մ2	0.142	100	14.2
2	E11-63	Լագաների տեղադրում 100*8100 մմ.	100մ2	0.142	100	14.2
3	E11-63	Լագաներ 100*100 մմ.	մ3	0.9	170	153
4	E11-273	Փայտե շրիշակների տեղադրում ՝ 60 մմ. □արձ.	գ.մ.	12	1	12
5	E15-584	Փայտե հատակի հղկում և ներկում	100մ2	0.142	100	14.2
6	E20-409	Օդափոխության անցքերի տեղադրում՝ մետաղե ցանց՝ Φ6 մմ.՝250*250 չափի՝ անկ. 40*40 մմ	հատ	5	10	50
7	C310-13	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	2.56	3	7.68
		Ընդամենը				**265.28**
8. ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ						
ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
1	E46-97	Պրոֆիլավոր ծածկույթի ապամոնտաժում (գոյություն ունեցող, վերատեղադրվող)	100մ2	2.6	10	26
2	E12-279	Թիթեղյա ջրատարների քանդում /վթարային/	100մ	0.45	10	4.5
3	C310-13	Շին աղբի հացաքում և տեղափոխում	տ	0.11	3	0.33
ՏԱՆԻՔԻ ԿԱՐԿԱՍԻ ԵՎ ԾԱԾԿՈՒՅԹ						
1	E10-70	Ժոլո□ի տախտակամած՝ 850x30(h) , L=45.20՝ ; 20%	մ3	0.3	200	60
2	E10-201	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն	մ3	0.3	10	3
3	E10-209	Փայտե կոնստրուկցիաների հականեխիչ միջոցառումներ մածուկներով	10մ2	7.96	1	7.96
4	E12-279	Ջրատարների կառուցում 0.55 մմ ցինկապատ թիթեղից (նոր թիթեղով)	100մ	0.45	300	135
5	E9-24	Պրոֆիլավոր ծածկույթի վերամոնտաժում /գոյություն ունեցող/	100մ2	2.6	100	260
6	E12-283	Տանիքի մետաղական ճաղաշարի կառուցում	100մ	0.45	200	90
7	շուկա	Շերտապողպատ 50x5, ք. 2,0 մ.	գծ.մ	27.3	2	54.6
8	շուկա	Պողպատե խողովակ Φ20	գծ.մ	41.5	1	41.5
9	շուկա	Պողպատե խողովակ Φ15	գծ.մ	83	0.5	41.5
10	E15-613	Ճաղաշարի ներկում 2 անգամ	100մ2	0.29	100	29
11	E9-46	Տանիքի մետաղական աստիճանի կառուցում	տ	0.02	500	10
12	շուկա	Պողպատե քառ. խողովակ 50x5,	գծ.մ	5.2	2	10.4
13	շուկա	Պողպատե քառ. խողովակ 40x3,	գծ.մ	3	2	6
14	E15-613	Աստիճանի ներկում 2 անգամ	100մ2	0.01	100	1
		Ընդամենը				**780.79**

		ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԲԱԺԻՆ-1				**30,888.40**
		ԲԱԺԻՆ-2				
		1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ԿՈՅՈՒՂԻ				
1	E16-34	Կոյուղու խողովակների մոնտաժում՝ Φ 100	մ	28.8	4	115.2
2	E16-33	Կոյուղու խողովակների մոնտաժում՝ Φ 50	մ	9	2	18
3	E16-262	Ջրի խողովակների մոնտաժում՝ Φ 20 /պոլիպրոպիլեն/	մ	16.2	1	16.2
4	E16-262	Պրոպիլենե De15 խողովակի մոնտաժում	մ	7.2	1	7.2
5	E17-57	Ասիական թասերի մոնտաժում	լրակազմ	6	30	180
6	E22-365	Կոյուղու խողովակի ձևավոր մասեր՝ Φ 100	հատ	11	3	33
7	E22-365	Կոյուղու խողովակի ձևավոր մասեր՝ Φ 50	հատ	9	3	27
8	E22-365	Ջրի խողովակի ձևավոր մասեր՝ Φ 20 /պոլիպրոպիլեն/	հատ	15	1	15
9	E22-365	Ջրի խողովակի ձևավոր մասեր՝ Φ 15 /պոլիպրոպիլեն/	հատ	12	1	12
10	E17-22	Ջրի ծորակների տեղադրում	լրակազմ	9	10	90
11	E22-365	Պողպատ-պոլիպրոպիլեն Φ 20 անցումի տեղադրում	հատ	6	1	6
12	ի.տ.	Φ 20 փականի տեղադրում	հատ	12	5	60
13	ի.տ.	Φ 15 ճկուն միացումների տեղադրում	հատ	18	1	18
14	E17-36	Հատականցքի տեղադրում՝ Φ50	լրակազմ	3	2	6
15	ի.տ.	Φ 50 սիֆոնների տեղադրում	հատ	9	3	27
		ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԲԱԺԻՆ-2				**630.60**
		ԲԱԺԻՆ-3				
		1. ՋԵՌՈՒՑՈՒՄ				
1	E18-112	Թուջե մարտկոցների ապամոնտաժում 74 հատ	էկմ	22.94	3	68.82
2	E16-263	Պողպատե կանգնակների ապամոնտաժում՝ Φ20	մ	252	0.5	126
3	շուկա	Կախիչ ցցիկների ապամոնտաժում	հատ	148	0.1	14.8
4	E46-54	Անցքերի □ացում միջհարկային ծածկում՝ Φ25	հատ	150	1	150
5	E22-365	Պոլիէթիլենե՝ Φ25 պատյանների տեղադրում	հատ	150	1	150
6	շուկա	Պողպատե կանգնակների՝ Φ20 վրա սգոնների եռակցում	հատ	150	1	150

7	E16-262	Պոլիպրոպիլենե կանգնակների՝ Φ20 մոնտաժումում	մ	271	2	542
8	E16-262	Պոլիպրոպիլենե առ□երիչների՝ Φ15 մոնտաժումում	մ	370	1	370
9	E16-134	Կարգավորիչ փական » ամերիկանկա«՝ Φ15	հատ	150	2	300
10	E16-134	Կանգնակների վրա փականի տեղադրում» ամերիկանկա«՝ Φ25	հատ	46	3	138
11	E16-134	Օդահեռացման փական 15մմ տրամաչափի	հատ	75	3	225
12	E16-134	Նիպել	հատ	62	3	186
13	ի.տ.	Մարտկոցների միացման կոմպլեկտ	կոմպ	75	1	75
14	ի.տ.	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր	հատ	364	0.5	182
15	E18-112	Ջեռուցման նոր մարտկոցների տեղադրում /621 սեկ./	էկմ	192.51	5	962.55
16	ի.տ.	Ալյումինե ռադիատորի սեկցիա՝ 500 մմ/h/; 194 վատ, 14 մթ	սեկ	621	4	2484
		ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԲԱԺԻՆ-3				**6,124.17**
		ԲԱԺԻՆ-4				
		1. Էլեկտրալուսավորություն և էլեկտրաուժային մաս				
1	Ц8-148-1	Մալուխ պղնձե ВВГ 4x10մմ	100մ	0.22	200	44
2	Ц8-148-1	Մալուխ պղնձե ВВГ 3x2.5մմ	100մ	2.6	100	260
3	Ц8-402-2	Հաղորդալար պղնձե ПВ-3 1x1,5մմ2 կարմիր	100մ	12.84	50	642
4	Ц8-402-2	Հաղորդալար ПВ-3 1x1,5 մմ2 կապույտ	100մ	12.84	50	642
5	Ц8-402-2	Հաղորդալար ПВ-4 1x4 մմ2 դեղին	100մ	11.23	50	561.5
6	Ц8-525-2	ավտոմատ անջատիչ եռաբևեռ - C50A, 10kA	հատ	2	2	4
7	Ц8-525-2	Ավտոմատ անջատիչ (միաբևեռ) 25 Ա	հատ	6	2	12
8	Ц8-591-7	էլ. վարդակ երկբևեռ, պատի մեջ տեղադրվող	100հատ	1.12	200	224
		հողանցման հպակով 16A, 230Վ				0
9	Ц8-591-10	Անջատիչ երկու սեղմակով, պատի մեջ տեղադրվող	100հատ	0.27	200	54
10	Ц8-591-10	Անջատիչ մեկ սեղմակով, պատի մեջ տեղադրվող	100հատ	0.26	200	52
11	ի.տ.	Մոնտաժային տուփ (մեկ տեղանոց) 70x70x43 մմ	հատ	46	1	46
12	ի.տ.	Ամրակներ 9 մմ2	տուփ	6	1	6
13	Ц8-604-1	Լուսատու 16Վտ ДВО 12-11-111.25	100հատ	1.43	1000	1430
14	Ц8-603-1	Լուսատու Լեդ, կախովի առաստաղի	100հատ	0.14	1000	140
15	Ц8-604-1	Լուսատու Լեդ 24 վատ, արտաքին	100հատ	0.02	1000	20
16	E46-57	Ակոսի փորում	100մ	12.84	30	385.2

17	E15-246-1	Ակոսի սվաղում	100մ2	1.284	300	385.2
18	Ц8-603-1	Հին լուսատուների ապամոնտաժում	100հատ	0.78	100	78
19	ի.տ.	Տուփեր անջատիչների և վարդակների համար.	հատ	165	1	165
		ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԲԱԺԻՆ-4				**5,150.90**
		ԲԱԺԻՆ-5				
		1. ՋԵՐՄԱՏԱՐԻ N 1 ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ				
1	E1-962	Հողի քանդում ջերմատարի երկարության□	100մ3	0.074	300	22.2
2	E7-762	Ե/Բ ծածկի սալերի ապամոնտաժում 14.8մ2	հատ	10	10	100
3	E22-68	Ջերմատար Φ76 մմ խողովակների ապամոնտաժում	մ	40	1	40
4	E46-50	Անցքի □ացում գետնախարիսխում՝ 600*600 մմ	հատ	1	10	10
5	E22-365	Պոլիէթիլենե՝ Φ80 պատյանների տեղադրում	հատ	2	10	20
6	E22-65	Պողպատե խողովակի՝ Φ76 մոնտաժումում	մ	40	3	120
7	E16-136	Կարգավորիչ փականների մոնտաժում՝ Φ76	հատ	2	5	10
8	E15-613	Խողովակների ներկում հակաքայքայիչ ներկով երկու շերտով	100մ2	0.095	200	19
9	E46-71	Անցքերի փակում գետնախարիսխումում	մ3	0.22	10	2.2
10	E26-47	խողովակների ջերմամեկուսացում ալյումինե փայլաթերթով պատած հանքաբամբակով	100մ2	0.11	200	22
11	E7-762	Ծածկի Ե/□ սալերի վերատեղադրում	հատ	10	20	200
12	E11-18	Ջրամեկուսիչ ռուբերոիդի տեղադրում	մ2	20.8	5	104
13	E1-970	Հողի հետլիցք սալերի վրա	100մ3	0.074	300	22.2
14	E16-219	Համակարգի փորձարկում	100մ	0.4	200	80
		ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԲԱԺԻՆ-5				**771.60**
		ԲԱԺԻՆ-6				
		ԿԱԹՍԱՅԱՏԱՆ ՋԵՐՄՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ				
		1. Ապամոնտաժման աշխատանքային ծավալներ				
1	E18-72	Գոյութ. ունեցող կաթսաների ապամոնտաժում	կ-տ	2	10	20
2	E22-65	Φ 108 պողպատե ծխատարի ապամոնտաժում	մ	8	1	8
3	E22-65	Ջերմատար Φ76 մմ խողովակների ապամոնտաժում	մ	7	1	7

4	E46-50	Անցքի □ացում ծածկի սալում՝ Φ 350մմ	հատ	1	10	10
5	E6-5-4	Բետոնե հիմքի պատրաստում ծխատարի տակ	մ3	0.07	100	7
6	C124-3	Ամրան A500C դասի 12մմ	տ	0.0085	500	4.25
7	E6-80	Հեղույսների տեղադրում Φ22՝ 4 հատ	տ	0.006	500	3
8	E6-83	Պողպատե թիթեղ 16 մմ. հաստ.	տ	0.057	500	28.5
9	E9-150	Ծխատար խողովակի՝ Φ325*11 մոնտաժում 7.8 մ	տ	0.664	500	332
10	E9-150	Ծխատար խողովակի՝ Φ219*10 մոնտաժում	տ	0.147	500	73.5
11	E6-5-4	Բետոնե հիմքի պատրաստում ծխատարի տակ	մ3	0.23	80	18.4
12	C124-3	Ամրան A500C դասի 12մմ	տ	0.0169	500	8.45
13	E18-72	Նոր կաթսաների մոնտաժում /գազև հեղուկ վառելան./ 220/ կվտ	կ-տ	2	2000	4000
14	E22-65	Պողպատե խողովակի ՝ Φ76 մոնտաժումում	մ	7.8	3	23.4
15	E15-613 E15-614	Խողովակների ներկում հակաքայքայիչ ներկով երկու շերտով	100մ2	0.019	200	3.8
16	E16-136 12-01-2020	փականների մոնտաժում՝ Φ76	հատ	2	50	100
17	E26-47 10-02-2020	Ծխնելույզի ՝ Φ325 ջերմամեկուսացում հանք. □ան□ակով. և ալյումինե փայլաթերթով փաթաթում	100մ2	0.11	300	33
		Ընդամենը՝ ԲԱԺԻՆ-6				**4,680.30**
		Ընդամենը				**48,245.97**
		ԱԱՀ	**20.00%**			**9,649.19**
		Ընդամենը				**57,895.16**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- **Վ. Գասպարյան**

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

---------- **Ռ. Զաքարյան**

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 3
« 08 » 09 2020թ. կնքված
«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/148-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	**դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին, պետական բյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում****											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611100/62	**կրթական օբյեկտների հիմնանորոգում-1**								**57 895 160**	**57 895 160**	**57 895 160**	**57 895 160**	**57 895 160**	**57 895 160**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

02698732 ---------- **Վ. Գասպարյան**
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

---------- **Ռ. Զաքարյան**
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 4
«08» 09 2020թ. կնքված
«ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-20/148-1» ծածկագրով պայմանագրի

ԿԱՊԱԼԻ ՕԲՅԵԿՏԻ, ԴՐԱ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՍԵՐԻ (ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ և ԱՅԼՆ) և ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼԻՔ ՆՅՈՒԹԵՐԻ և (ԿԱՄ) ՍԱՐՔԵՐԻ ՈՒ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Չափաբաժին 1. Կրթական օբյեկտների հիմնանորոգում -1

«ԳՅՈՒՄՐՈՒ N 26 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ և ՆՈՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ N 26 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի դահլիճի վերանորոգման աշխատանքների կատարման ընթացքում շինարարական նյութերն ու կոնստրուկցիաները պետք է ունենան **10 (տաս) տարվա երաշխիքային ժամկետ:**

«ԳՅՈՒՄՐՈՒ N 26 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի դահլիճի վերանորոգման աշխատանքների կատարման ընթացքում նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների երաշխիքային ժամկետներին **պահանջներ չեն ներկայացվում:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ռ. Զաքարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 08 » 09 2020թ. կնքված
«ՀՀԿԳՄՆԳՀԱՇՁԲ-20/148-1» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

Չափաբաժին 1. Կրթական օբյեկտների հիմնանորոգում-1

«ԳՅՈՒՄՐՈՒ Ն 26 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ և ՆՈՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետ	
		Սկիզբ	Ավարտ
	Բաժին-1		
	Շինարարական աշխատանքներ		
1	Առաջին մասնաշենքի ներքին հարդարման աշխատանքներ. I հարկ /հատակներ, պատեր, առաստաղներ/	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ
2	Առաջին մասնաշենքի ներքին հարդարման աշխատանքներ. II հարկ /հատակներ, պատեր, առաստաղներ/	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ
3	Պ-1 մակնիշի պատուհանների փոխարինման աշխատանքներ	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ
4	Պ-2 մակնիշի պատուհանների փոխարինման աշխատանքներ	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ
5	Պատուհանի բացվածքի իրականացման աշխատանքներ	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ
6	I մասնաշենք. Դռներ /Դուռ Դ-1-ի փոխարինման աշխատանքներ, Դուռ Դ-2-ի փոխարինման աշխատանքներ, Դուռ Դ-3-ի փոխարինման աշխատանքներ/	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ
7	Հատակներ	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ
8	Տանիքի վերնորոգում /ապամոնտաժման աշխատանքներ, տանիքի կարկասի և ծածկույթ/	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ
	Բաժին-2		
	Ջրամատակարարում և կոյուղի		
1	Ջրամատակարարում և կոյուղի	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ
	Բաժին-3		
	Ջեռուցում		
1	Ջեռուցում	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ
	Բաժին-4		
	Էլեկտրալուսավորություն և էլեկտրաուժային մաս		

1	Էլեկտրալուսավորություն և էլեկտրաուժային մաս	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ
	Բաժին-5		
	Ջերմատարի N 1 հատվածի վերանորոգում		
1	Ջերմատարի N 1 հատվածի վերանորոգում	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ
	Բաժին-6		
	Կաթսայատան ջերմոտեխնիկական վերանորոգում		
1	Կաթսայատան ջերմոտեխնիկական վերանորոգում /ապամոնտաժման աշխատանքների ծավալներ/	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ
	Ընդամենը 2020 թ. կատարվող աշխատանքներ	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	Սույն թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ռ. Զաքարյան

/ստորագրություն/

Կ.Տ